

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑՉԻ  
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ  
ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՑԱՆԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ  
ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

(ՆԱԽԱԳԻԾ)

Կ. Մելքոնյան  
Կրթական ծրագրերի կենտրոն  
Ենթածրագրի ղեկավար  
Աղվերան, 28-29 մարտի, 2011թ.

## ՉԱՓԱՆԻՇՆԵՐ (ՆԱԽԱԳԻԾ)

1. Հանրակրթական ուսումնական հաստատության հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչ վերապատրաստող երաշխավորված կազմակերպությունների ցանկում (այսուհետ՝ Ցանկ) կարող են ընդգրկվել իրավաբանական անձի կարգավիճակ և առնվազն երկու տարվա պետական գրանցում ունեցող.

ա) Հայաստանի Հանրապետության պետական և ոչ պետական ուսումնական հաստատությունները՝ հանրակրթական դպրոցները, միջին մասնագիտական, բարձրագույն և այլ ուսումնական հաստատություններ,

բ) Կրթության ազգային ինստիտուտը (ԿԱԻ),

գ) վերապատրաստումների փորձ ունեցող հիմնադրամներ, հասարակական կազմակերպություններ, մասնագիտացված կառույցներ,

դ) առևտրային ոչ պետական կազմակերպություններ:

## ՉԱՓԱՆԻՇՆԵՐ (ՆԱԽԱԳԻԾ)

2. Ցանկում ընդգրկվելու համար հայտ ներկայացրած կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) պետք է համապատասխանի որակի և փորձի հետևյալ պահանջներին.

ա) պետք է ունենա հանրակրթական ուսումնական հաստատության հետ կնքվելիք գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, մասնագիտական հատկանիշներ, տեխնիկական միջոցներ, ֆինանսական կայունություն և աշխատանքային ռեսուրսներ, այդ թվում՝

1) հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչների, ղեկավարների կամ կրթության կառավարման ոլորտի աշխատողների պատրաստման և (կամ) մասնագիտական զարգացման և վերապատրաստման առնվազն 2 տարվա փորձ,

## ՉԱՓԱՆԻՇՆԵՐ (ՆԱԽԱԳԻԾ)

- 2) վերապատրաստման գործընթացն անխափան կազմակերպելու համար անհրաժեշտ սեփական կամ վարձակալված տարածք՝ առնվազն 1 ուսումնական խմբի (25-30 մարդ) հետ տեսական և գործնական պարապմունքների անցկացման համար,
- 3) ուսուցիչների վերապատրաստման ծրագրի բովանդակությանը համապատասխան գույք, ուսումնանյութական բազա, կահավորանք, ՏՀՏ միջոցներ, սարքավորումներ,
- 4) փորձառու վարչական, ֆինանսահաշվապահական և վարչատնտեսական աշխատողներ,

## ՉԱՓԱՆԻՇՆԵՐ (ՆԱԽԱԳԻԾ)

5) որակյալ դասախոսներ, ովքեր ունենան համապատասխան բարձրագույն մասնագիտական կրթություն և նվազագույնը 5 տարվա աշխատանքային ստաժ, որից առնվազն 2 տարին կադրերի պատրաստման կամ վերապատրաստման ոլորտում և քաջատեղյակ լինեն.

- Հայաստանի Հանրապետության կրթական համակարգին՝ ներառյալ անհրաժեշտ օրենսդրական, իրավանորմատիվային և ուսումնամեթոդական փաստաթղթերին (օրենքներ, կրթակարգ, հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչներ, առարկայական ծրագրեր, գնահատման ընթացակարգեր, ուսուցիչների ատեստավորմանը առնչվող կարգեր և այլն),

- ուսուցիչների կատարելագործման և վերապատրաստման գործընթացում առկա հիմնախնդիրներին և նրանց մասնագիտական զարգացման կարիքներին:

## ՉԱՓԱՆԻՇՆԵՐ (ՆԱԽԱԳԻԾ)

3. Ցանկում ընդգրկվելու համար Կազմակերպությունը պետք է կարողանա.

- 1) ապահովել ուսուցիչների վերապատրաստման ընթացիկ թեմատիկ պլան-ծրագրերի, հայտորոշիչ և ամփոփիչ թեստային առաջադրանքների, պարապմունքների ժամանակացույցերի մշակումը,
- 2) ապահովել վերապատրաստումների գործընթացի հետ կապված կազմակերպչական աշխատանքների պլանավորումը և դասընթացի յուրացման արդյունքների գնահատումը,
- 3) վերապատրաստումներից հետո շարունակական աջակցություն ցուցաբերել ուսուցիչներին՝ իրենց աշխատանքի ընթացքում,
- 4) կատարած աշխատանքների վերաբերյալ կազմել և ներկայացնել միջանկյալ և ամփոփիչ բովանդակային և ֆինանսական հաշվետվություններ:

## ՉԱՓԱՆԻՇՆԵՐ (ՆԱԽԱԳԻԾ)

4. Կազմակերպությունը չի կարող ընդգրկվել Ցանկում և հանրակրթական ուսումնական հաստատության հետ կնքել ծառայությունների գնման պայմանագիր, եթե`

ա) դատական կարգով ճանաչված է անվճարունակ, գտնվում է լուծարման գործընթացում, արգելանքի տակ ունի պայմանագրի կատարման համար հայտով ներկայացված գույք,

## ՉԱՓԱՆԻՇՆԵՐ (ՆԱԽԱԳԻԾ)

բ) հայտ ներկայացնելու օրվան նախորդող հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ ունի ժամկետանց պարտքեր՝ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների գծով,

գ) ղեկավար մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է, կամ ներկայացրել է կեղծ տվյալներ և (կամ) իր գործունեությամբ կամ անգործությամբ խախտել է գնման պայմանագրով նախատեսված, պատվիրատուի կողմից գնման պայմանագրի միակողմանի լուծարմանը հանգեցրած պարտավորություն:



## ՉԱՓԱՆԻՇՆԵՐ (ՆԱԽԱԳԻԾ)

5. Կազմակերպության համապատասխանությունը սույն չափանիշներին գնահատվում է <<Հանրակրթական ուսումնական հաստատության ատեստավորման ենթակա ուսուցիչ վերապատրաստող երաշխավորված կազմակերպությունների ցանկի ձևավորման կարգի>> համաձայն:

ՉԱՓԱՆԻՇՆԵՐ (ՆԱԽԱԳԻԾ)

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ